ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 19 » հունիսի 2019 թվականի N:276-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՌԱՓԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՏԵՓԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 48-րդ կետի 21-րդ ենթակետի դրույթներով, անհիմն համարելով Ստեփան Նազարյանի 2019 թվականի հունիսի 4-ի բացատրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Առափիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ստեփան Նազարյանին հայտարարել նկատողություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Առափիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ստեփան Նազարյանին՝ 2019-2020 ուսումնական տարվա մեկնարկին ներկայացնել տեղեկատվություն արձանագրված խախտման վերացման համար ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է